

Շահագրգիռ կողմերի ներգրավում

Ինչպե՞ս է Լիդիանը համագործակցում շահագրգիռ կողմերի հետ

- Լիդիան ընկերությունը հետաքրքրված է և կողմնակից է ազդակիր շահագրգիռ կողմերի հետ ակտիվ, թափանցիկ և շարունակական երկխոսության:
- Ընկերության Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանով (ՇԿՆՊ) սահմանված են ինչպես Ծրագրի ընթացքում, այնպես էլ Ծրագրից հետո շահագրգիռ կողմերի հետ փոխհարաբերությունների զարգացման ուղղեցույցեր: Նշյալ պլանը պարբերաբար թարմացվում է և տեղադրված է Լիդիանի և Գեոթիմի կայքերում:
- ՇԿՆՊ-ով սահմանված միջոցառումներից բացի, Լիդիանը պարտավորվում է հանրությանը տեղյակ պահել իր կողմից իրականացվող սոցիալական, բնապահպանական և ֆինանսական ծրագրերի կատարողականի մասին, ինչպես նաև տեղական և պետական շահագրգիռ կողմերի հետ սերտ համագործակցության միջոցով ապահովել դրանց ազդեցությունների համատեղ մշտադիտարկում:
- Ընկերությունը կողմնակից է նաև թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովող նորագույն միջազգային չափանիշների կիրառմանը, ինչպիսիք են Ցիանիդի կառավարման միջազգային օրենսգիրքը, Արդյունահանող ճյուղերի թափանցիկ գործունեության նախաձեռնությունը և Անվտանգության և մարդու իրավունքների կամավոր սկզբունքները:



Համայնքային կապերի կոմիտեներ (ՀԿԿ)

- Համայնքների և Լիդիանի միջև կայուն և շարունակական կապ ապահովելու նպատակով, Գնդեվազում, Գորայքում, Մարավանում և Ջերմուկում հիմնադրվել են համայնքային կապերի կոմիտեներ: Բոլորի շահերը ներկայացնելու նպատակով, կոմիտեների կազմում ընդգրկվել են համայնքի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք:



Համայնքներ և պարբերական

- Ծրագրի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման նպատակով յուրաքանչյուր ամիս Գնդեվազի, Գորայքի, Մարավանի և Ջերմուկի շուրջ 1,000 ընտանիքներին տրամադրվում են Համայնքային պարբերականներ:
- Ծրագրի իրականացման գոտուց դուրս ևս առկա է լրատվական էլեկտրոնային պարբերական, որը հասանելի է մեծ թվով շահագրգիռ կողմերի համար:

Ամուլսար տեղեկատվական կենտրոն

- Տեղացի շահագրգիռ կողմերին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև նրանց հարցերին պատասխանելու և Ամուլսարի հետ կապված բողոքների քննարկման գործընթացն ապահովելու նպատակով, Գնդեվազում հիմնվել է տեղեկատվական կենտրոն:

Հանրային հանդիպումներ և խորհրդակցություններ

- ՇՄԱԳ-ի ներկայացման և քննարկման նպատակով կազմակերպվել են մի շարք հանրային լսումներ և հանդիպումներ: ԲՄԱԳ-ի հրապարակումից առաջ անցկացվել է կլոր սեղան, որից հետո նախատեսվում են լրացուցիչ հանդիպումներ: Նման հրապարակումը արտացոլում է համագործակցելու մեր պատրաստակամությունը և հանդիսանում է Հայաստանում ՇՄԱԳ հաստատման ընթացակարգի, ինչպես նաև մեր ներդրողների կողմից ԲՄԱԳ-ի համար սահմանված պահանջ:
- Լիդիանը ՇՄԱԳ-ի և ԲՄԱԳ-ի հաստատման շրջանակներից դուրս, մասնավորապես շինարարության փուլում, անցկացնելու է պաշտոնական և ոչ պաշտոնական խորհրդակցություններ տեղական և պետական մակարդակի շահագրգիռ կողմերի հետ: